



ՀԱԿՈՒ ՄԱՐՏԱ-ԱՔՐԱՅԱՄԻ
ՉՈՒԱՔՅԱՆ

ԿԵՆՍԱՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ



НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ИНСТИТУТ АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ

ЗАСЛУЖЕННЫЕ УЧЕНЫЕ

11

АКОП МАРДА-АБРААМОВИЧ
ЧОЛАКЯН

БИБЛИОГРАФИЯ

Составители:

д-р фил. наук АРМЕН Ш. САРКИСЯН И канд. ист. наук ГЕВОРК ЯЗЕЧЯН

Введение: д-р фил. наук АРМЕН Ш. САРКИСЯН

REPUBLIC OF ARMENIA – NATIONAL ACADEMY OF SCIENCES
INSTITUTE OF ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

HONORED SCIENTISTS

11

HAGOP MARD-APRAHAM
TCHOLAKIAN

BIBLIOGRAPHY

Authors of the Bibliography:

Armen Shavarsh Sargssian (Doctor, Philology), Gevorg Yazedjian (PhD, History)

Introduction by Armen Shavarsh Sargssian (Doctor, Philology)

ЕРЕВАН
ИЗДАТЕЛЬСТВО ИАЭ 2022

YEREVAN
IAE PUBLICATION 2022

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՎԱՍՏԱԿԱՃԱՏ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐ

11

ՀԱԿՈՒ ՄԱՐՏԱ-ԱՔՐԱՅԱՄԻ ՉՈԼԱՔՅԱՆ

ԿԵՆՍԱՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Կազմեցին

Բ.Գ.Դ. ԱՐՄԵՆ Ը. ՍԱՐԳՍՅԱՆԸ ԵՎ Պ.Գ.Թ. ԳԵՎՈՐԳ Գ. ՅԱԶԸՃՅԱՆԸ
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆԸ՝ Բ.Գ.Դ. ԱՐՄԵՆ Ը. ՍԱՐԳՍՅԱՆԻ

ԵՐԵՎԱՆ
ՀԱԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2022

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության
ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագիր և անգլերենի թարգմանիչ՝
ս. գ. թ. Գևորգ Յազրճյան

Չ 730 **Հակոբ Չոլաքյան: Կենսամատենագիտություն /** Կազմեցին՝
Արմեն Շ. Սարգսյան և Գևորգ Գ. Յազրճյան, ներածությունը՝
Արմեն Շ. Սարգսյանի. – Եր.: ՀԱԻ հրատ., 2022, – 64 էջ.
(Վաստակաշատ գիտնականներ 11):

Սույն կենսամատենագիտությունում ներկայացվում են բազմավաս-
տակ հայագետ-մանկավարժ Հակոբ Չոլաքյանի կյանքի, մանկավար-
ժական և գիտական գործունեության համառոտ բնութագիրն ու տպա-
գիր աշխատությունների ցանկն ըստ ոլորտների:

Գրքույկը նախատեսված է մանկավարժների, պատմաբանների, ազ-
գագրագետների, բանագետների, լեզվաբանների, բարբառագետնե-
րի, սփյուռքագիտությամբ զբաղվող մասնագետների, ուսանողների
և ընթերցող լայն շրջանակների համար:

ՀԱԿՈՒ ՄԱՐՏԱ-ԱԲՐԱՅԱՄԻ ՉՈՒՍՔՅԱՆ

(բազմավաստակ հայագետ-մանկավարժի
ծննդյան 75-ամյակի առթիվ)

Սփյուռքահայ վաստակաշատ մանկավարժ, հայագիտության անխոնջ նվիրյալ Հակոբ Չոլաքյանը մեր այն մտավորականներից է, որոնց տեսակը, մանավանդ սփյուռքում, սակավաթիվ է: Բնավորությամբ՝ անչափ համեստ, հայագիտության բազմաթիվ բնագավառներ (մանկավարժություն, ազգագրություն, բանագիտություն, լեզվաբանություն, բարբառագիտություն, գրականագիտություն, պատմագրություն, սփյուռքագիտություն, հուշագրություն և այլն) ընդգրկող իր արժեքավոր հետազոտությունների քանակով՝ չափազանց «անհամեստ» Հակոբ Չոլաքյանը ծնվել է 1947 թվականի հոկտեմբերի 16-ին Սիրիայի Քեսապի շրջանի Գարատուրան գյուղում: Նախնական կրթությունն ստացել է ծննդավայրի Ազգային Մերոպյան և Քեսապի Հայ ավետարանական Նահատակաց նախակրթարաններում: Միջնակարգ-երկրորդական ուսումը Այնճարի (Լիբանան) Հայ ավետարանական երկրորդական վարժարանում ստանալուց հետո 1968-ին նույն վարժարանում անցնում է մանկավարժական աշխատանքի:

1969–1970 թթ. Բեյրութի Հայկազյան քոլեջի հայագիտական ամբիոնի մասնավոր ուսանող լինելով՝ Հակոբ Չոլաքյանը 1970-ին ընդունվում է Երևանի պետական համալսարանի բանասիրության ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության բաժինը:

Անսահման են Չոլաքյանի հայրենապաշտությունն ու բնապաշտությունը, իսկ նման աշխատասիրություն ու ձգտումներ ունեցող սփյուռքահայ ուսանողի կերպարը խորհրդային մտածողությամբ համակուրսեցիներիս համար անսովոր ու ինչ-որ տեղ անընկալելի, թերևս նաև ուղենիշային երևույթ էր: Նա երեք տարվա իր ուսանողական կյանքն անցկացրեց գերժանրաբեռնված ու գերհագեցած:

Հ. Չոլաքյանը ոչ միայն մասնակցում էր Հայաստանի տարբեր շրջաններ մեր կազմակերպած արշավներին, հիանում հայոց բնաշխարհով ու հայկական ճարտարապետական հուշարձաններով, այլև «ազատ ժամերին» հանդիպում 1946-ին հայրենադարձված քեսապցիներին, նրանցից ճայնագրում ազգագրական և բանահյուսական նմուշներ, նույնիսկ հասցնում էր ժողովրդական երգերը նոտագրել տալ Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայում:

Ինչ խոսք, այդ աշխատանքը նրան հոգեհարազատ էր, քանզի դեռևս 1969–1970 թթ. Բեյրութի Հայկազյան քոլեջի հայագիտական ամբիոնի մասնավոր ուսանող եղած ժամանակ նա զբաղվել էր բանահավաքչական աշխատանքով և նույնիսկ հասցրել հավաքած նյութերից տպագրել իր ուսուցչապետ Գրիգոր Շահինյանի «Ահեկան» պարբերականում:

Երեք տարի սովորելով Երևանի պետական համալսարանում և այդ ընթացքում հնգամյա կուրսի բոլոր քննությունները փայլուն հանձնելով՝ Հակոբ Չոլաքյանը 1973-ին բանասիրական գիտությունների մագիստրոսի աստիճանով, բանասերի ու հայոց լեզվի և գրականության ուսուցչի որակավորմամբ վերադառնում է Այնճար: 1973–1976 թթ. նա աշխատում է Այնճարի Հայ ավետարանական ու ՀԲԸՄ-ի Բեյրութի Երվանդ Տեմիրճյան վարժարաններում և Ազգային Սուրեն Խանամիրյան կոլեջում: Լիբանանում 1975 թ. սկսված քաղաքացիական պատերազմի պատճառով 1976 թ. նա տեղափոխվում է Սիրիա և աշխատանքի անցնում Հալեպի Քարեն Եփփե ազգային ճեմարանում՝ միաժամանակ դասավանդելով Հալեպի Մխիթարյան վարժարանում և Մխիթարյան հայագիտական ամբիոնում: 1996-ից Չոլաքյանը դասախոս է աշխատում նաև Համազգայինի Հալեպի հայագիտական հաստատությունում:

Սիրիայում իսլամիստ ծայրահեղականների 2011 թ. հրահրած քաղաքացիական պատերազմի և Հալեպի գնդակոծությունների պատճառով Հ. Չոլաքյանը 2012-ին ընտանիքով ստիպված տեղափոխվում է Միջերկրականի ափին գտնվող հայրենի Քեսապ՝ ծննդավայր Գարատուրան գյուղ, իսկ 2014 թվականի մարտի 21-ին Թուրքիայի հովանավորությունը վայելող հակապետական ծայրահեղական խմբավորումների՝ Քեսապ ներխուժումից հետո վերջնականապես հաստատվում է Երևանում:

Թվում է՝ 67-ամյա բազմավաստակ մանկավարժ-հայագետը, իր վրա կրելով Բեյրութի, Հալեպի և Քեսապի արհավիրքների հետևանքով եռակի արտագաղթի ճակատագիրը, Երևան է վերադարձել՝ վաստակած հանգիստը Մայր հայրենիքում վայելելու համար:

Բայց եթե ոմանց համար ընդունելի և ինչ-որ տեղ նաև հաճելի կարող է հնչել «Ալուրս մաղել եմ, մաղն էլ պարից կախել եմ» առածը, ապա Չոլաքյանի նման պրպտուն միտք ու անհանգիստ բնավորություն ունեցող մշակի համար դա ոչ թե անելիքի ավարտն էր ազդարարում, այլ նոր սկիզբը, քանի որ նրա և՛ «այլուրն» է անսպառ, և՛ «մաղելիքը»՝ անվերջանալի:

Եվ քանի որ 2002-ին Հ. Չոլաքյանն իր աշակերտ, պ.գ.թ. Գևորգ Յազրճյանի պարտադրմամբ ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտում պաշտպանել էր գիտական թեզ («Անտիոքի մերձակայ Ռուճի հովիտի հայերը (Պատմա-ազգագրական ուսումնասիրություն)») և ստացել պատմական գիտությունների թեկնածուի աստիճան, ուստի Հայաստան տեղափոխվելուց հետո ինստիտուտի տնօրինությունը վաստակաշատ գիտնական-մանկավարժին անմիջապես աշխատանքի է ընդունում Հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանասիրության բաժնում՝ որպես ավագ գիտաշխատող: Իսկ 2016 թվականին Քեսապին նվիրված ծանրակշիռ դոկտորական ատենախոսությունը պաշտպանելուց հետո նրան տրվում է առաջատար, այնուհետև մի քանի տարի անց գիտական աննախագահ գործունեության համար՝ գլխավոր գիտաշխատողի պաշտոն:

Երևանի պետական համալսարանի բանասիրության ֆակուլտետի հայոց լեզվի ամբիոնը ևս 2014 թվականին սիրով հրավիրում է իր նախկին սանին՝ արդեն բազմավաստակ լեզվաբան, սփյուռքահայ դպրոցական և բուհական տասնյակ դասագրքերի հեղինակ Հակոբ Չոլաքյանին՝ համատեղությամբ դասավանդելու արևմտահայերեն:

Ջուզահեռաբար նա մի քանի տարի աշխատում է նաև ՀՀ ԳԱԱ Հրայցյա Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի արևմտահայերենի բաժնում:

Միայն 2014-ից մինչև 2022 թվականը հայրենիքում իր երկրորդ շնչառությունն ստացած Չոլաքյանը հրատարակում է ազգագրական, լեզվաբանական, պատմագիտական, հուշագրական և այլ բնույթի ավելի քան 16 գիրք:

Բեղուն և բազմաշնորհ է 75-ամյա Հակոբ Չոլաքյանի վաստակը՝ տարբեր բնագավառներ ընդգրկող 60 գիրք, պարբերականներում տպագրված բազում հոդվածներ, դիմատետրի (ֆեյսբուք) էջերում տեղադրված և մեծ արձագանգ գտած տարաբնույթ գրառումներ, ակնարկներ, զանազան օգտաշատ հարցազրույցներ, գիտական և մանկավարժական զեկուցումներ...

Ժողովուրդը նման տաղանդաշատ մարդկանց համար ասում է. *«Աստված որ մեկին տալիս է, էլ չափ ու սահման չի ճանաչում»:*

Բացի աստվածատուր բանաստեղծական շնորհքով օժտված լինելուց, Չոլաքյանը մանկավարժության այն եզակի նվիրյալներից է, որն ուսուցչական և դասախոսական աշխատանքը զուգակցել է իր իսկ պատրաստած դպրոցական և բուհական դասագրքերի հրատարակությամբ: Նրա հեղինակած դպրոցական դասագրքերը ավելի քան երեք տասնամյակ է՝ կիրառվում են Սփյուռքի տարբեր գաղութների հայկական նախակրթական, միջնակարգ և երկրորդական դպրոցներում:

Բերիո թեմի ազգային առաջնորդարանի հովանավորությամբ Հակոբ Չոլաքյանի պատրաստած գունատիպ **«Հայերէնի դասագիրքս»**, Ա, Բ, Գ, Դ, Ե, Զ (1990–1993 թթ., նկարիչ՝ Վիգեն Պերթիզյան) 6 գրքերի շարքը՝ ուսուցչի համար համապատասխան ուղեցույցներով, բովանդակությամբ, մեթոդով, ձևով ու նպատակներով նորություն էր ոչ միայն հայկական սփյուռքում, այլև Հայաստանում:

Դպրոցական դասագրքերի և դրանց ուղեցույցների պատրաստությունը մասնագիտական լայն քննարկումների և առաջադրանքների բովով է անցել: Նախակրթարանների համար նախատեսված **«Հայերէնի դասագիրքս»** շարքի ամենից ակնբախ կողմերից մեկն այն է, որ դասագրքերը պատրաստվել են այն սկզբունքով ու մտահոգությամբ, որպեսզի հայերենով չդասավանդվող նյութերի (մաթեմատիկա, մարդակազմություն, աշխարհագրություն, պատմություն և այլն) աշխարհն ու բառամթերքը՝ գեղարվեստական խոսքի և բնագրերի հետ, նպաստեն աշակերտության կողմից հեշտությամբ յուրացվելուն:

Իսկ միջնակարգ և երկրորդական կարգերի համար Չոլաքյանի պատրաստած գրականութեան և լեզվի **«Անդաստան»** ձեռնարկի Ա, Բ, Գ, Դ, Ե, Զ (2009–2014 թթ.) 6 գրքերում լեզվագիտությունն ու գրականությունը համընթաց ընթանում են մինչև 12-րդ կարգ:

Հակոբ Չոլաքյանն իր ուսումնասիրությունների նյութ է դարձնում արևմտահայերենն ու ավանդական ուղղագրությունը ոչ միայն իր՝ լեզվի ուսուցիչ և դասախոս լինելու հանգամանքից ելնելով, այլև անհրաժեշտաբար՝ նկատի ունենալով լեզվի կանոնակարգման հետ կապված բազմաբնույթ հարցերը, որոնք սփյուռքի մեջ շատ հաճախ էին հրապարակային քննարկումների նյութ դառնում:

Չոլաքյան մանկավարժը ավանդական ուղղագրությանը և արևմտահայերենի քերականությանը նվիրված մի շարք արժեքավոր մենագրություններ է հեղինակել (**«Հայերէնի օւանդական ուղղագրութիւն»**, 2000 թ., **«Աւանդական ուղղագրութիւն (կանոնակարգ և խնդիրներ)»**, 2016 թ., **«Արեւմտահայերէն քերականութիւն (կանոնակարգ և խնդիրներ)»**, Ա. գիրք, 2017 թ., **«Արեւմտահայերէնի կանոնակարգման հարցեր (Չթեքուող խօսքի մասեր)»**, 2018 թ., **«Գործնական արեւմտահայերէն»**, 2018 թ., **«Արեւմտահայերէն քերականութիւն (կանոնակարգ և խնդիրներ)»**, Բ. գիրք, 2019 թ.):

Ճիշտ է, Հակոբ Չոլաքյանի առաջին գիրքը՝ **«Այսպէս սկսաւ գառունը»** (1970 թ.), քնարականությամբ լեցուն պոետիկ հոգու առաջին, բայց հասուն ճիշն էր, այնուամենայնիվ բանաստեղծությունների ժողովածուի լույս ընծայումից հետո 23-ամյա Չոլաքյանը մտածված իր մեջ լռեցրեց բանաստեղծին և գիտակցաբար դարձավ ավելի քան մեկ հազարամյակ առաջ՝ 9–11-րդ դարերում, լայնածավալ գաղթի հետևանքով Միջերկրականի ափամերձ Անտիոքի տարածաշրջանի Քեսասի շրջանում հանգրվանած հայության նյութական և բանավոր մշակութային ժառանգության ժողովրդական մատենագիրը:

Երիտասարդ Չոլաքյանը քաջ գիտակցում էր, որ ավելի քան մեկ հազարամյակ Անտիոքի տարածաշրջանում ապրող հայությունը, շրջապատված լինելով տարատեսակ լեզուներով խոսող և կրոններ դավանող հարևան ժողովուրդներով, դարերի թոհուրոհի միջով անցնելով, ամեն կերպ ձգտել է պահպանել նախնիներից փոխանցված նյութական և հոգևոր մշակույթի ինքնատիպ գանձերը: Մակայն նոր ժամանակներն իրենց օրենքներն ու խաղերն էին թելադրում՝ վտանգի տակ դնելով փոքրաթիվ ժողովուրդների մշակութային ժառանգության գոյությունը:

Եվ պատահական չէ, որ Հակոբ Չոլաքյանի հեղինակած և հրատարակված գրքերի գրեթե կեսը՝ շուրջ 3 տասնյակ անուն, կազմում են

հենց այդ տարածաշրջանի հայության պատմա-ազգագրական և բանասիրական աշխատությունները՝ «**Քեսապի ժողովրդական երգարուեստը**», «**Միջ-գաւառական անեքթոտներ**», «**Քեսապ, Ա, Բ, Գ հատորներ**», «**Քեսապի բարբառը**», «**Անտիոքի մերձակայ Ռուհի հովիտի հայերը (Պատմա-ազգագրական ուսումնասիրություն)**», «**Յամբած աղբիւրը նորէն կը բխի (Սարգիս Գապաղեանի պատումը Մուսա լեւան հերոսամարտի մասին)**», «**Քեսապի երեք օրերը (21–23 մարտ 2014)**», «**Քեսապի նիւթական մշակոյթը**», «**Պատմական Անտիոքի հայերը եւ միւս հաւաքականութիւնները**» (տպագրվում է) և այլն:

Սփյուռքագիտության համար արժեքավոր են Արևելքի հայկական գաղթօջախներին, մասնավորապես Սիրիայի հայ գաղութին նվիրված Չոլաքյանի ուսումնասիրությունները, սիրիահայ նոր գաղութի կազմավորման, գաղթականների տեղաբաշխման պատմությունը: Նրա համար ուսումնասիրության ելակետը հայ դպրոցն է, որովհետև դպրոցով է պայմանավորված տվյալ գաղթավայրի, այնտեղ գործող ազգային կուսակցությունների, մշակութային, հասարակական և գաղափարական կյանքի գոյությունը:

Այդ ամենը հանգամանորեն արտացոլված են Չոլաքյանի հրատարակած հայկական դպրոցների հուշամատյաններում («**Յիսնամեակ Քարէն Եփփէ ազգային ճեմարանի, 1947–1997**», «**Ութսունամեակ Հալէպի ազգային Սահակեան վարժարանի, 1927–2007**», «**Ոսկեմատեան Քուլէթի ազգային վարժարանի, 1961–2011**», «**Տարեգրութիւն Հալէպի հայ աւետարանական Բեթէլ վարժարանի, 1923–2013**»):

Հ. Չոլաքյանը մշակում է նման հրատարակությունների տարեգրության եղանակը՝ ցույց տալով տվյալ գաղութի կազմավորման պատմությունը, ուսումնադաստիարակչական գործընթացի ամբողջական պատկերով ներկայացնելով կրթական հաստատության նշանակությունն ու դերը: Այս սկզբունքներով ու մոտեցմամբ է պատրաստվել նաև Քարէն Եփփէի կյանքին ու որբահավաք գործունեությանը նվիրված գիրքը («**Քարէն Եփփէ հայ Գողգոթային եւ վերածնունդին հետ**», 2001թ.):

Չոլաքյանը ստվարաձավալ երկու հատորով ներկայացրել է սփյուռքի մայր գաղութի՝ Սիրիայի հայության կրթության վերակազ-

մավորումն ու ընթացքը: Միրիահայ դպրոցի պատմությունը ներկայացնելիս նա կանգ է առնում շուրջ 110 հայաբնակ վայրերում գործող 240 ամենօրյա և նրանց կից՝ կիրակնօրյա, երեկոյան, գիշերային, արհեստի ու ամառային կրթօջախների նկարագրության վրա (**«Սուրիահայ դպրոցի պատմություն»**, Ա հատոր, 2021 թ., **«Սուրիահայ դպրոցի պատմություն»**, Բ հատոր, 2021 թ.): Ի դեպ, այս երկհատորյակը հեղինակի ավելի քան 50 տարվա տքնաշան աշխատանքի արդյունքն է:

Մանկավարժական և բանասիրական բազմաբնույթ գործունեությանը զուգահեռ՝ գրականությունն ու գրականագիտությունը միշտ Չոլաքյանի առօրյայի մասն են կազմել:

Չոլաքյանը գրականություն մտավ «Շիրագ» դպրոցական պարբերականում, «Պատանեկան արձագանգ» երկշաբաթաթերթում եւ Միմոն Միմոնյանի «Սփիռք» շաբաթաթերթի «Սփիռք – Գարուն» հավելվածում հրատարակված իր բանաստեղծություններով (որոնք ամբողջական լույս տեսան Միմոնյանի հիմնադրած «Սփիռք – Գարուն» մատենաշարով՝ իբրև գրքույկ), այնուհետև նվիրվեց հայագիտությանն ու Անտիոքի տարածաշրջանի **ազգագրական և բանահյուսական նյութերի հավաքչական աշխատանքներին**: Այնուամենայնիվ հետագայում ևս նա երբեք չկտրվեց գրական-ստեղծագործական կյանքից:

Սփյուռքում Չոլաքյանը եղել է հայ գրողների հորելյանական հանդիսությունների փնտրված ատենաբանը: Նա իր ելույթներով, հոդվածներով ու մենագրությամբ հանրությանն է ներկայացրել գրական մի քանի շրջանակների (Միրիա, Կոստանդնուպոլիս, Արցախ) հայ գրականության առօրյան (**«Արցախեան ինքնաճանաչման բանաստեղծությունը»**, 1990 թ.):

Հակոբ Չոլաքյանը տարիներ շարունակ **«Հնհնությունը լեզուի մասին»**, **«Փլոդ դպրոցները»**, **«Ես ինձի հետ»** ընդհանուր խորագրերի ներքո դիմատետրի էջերում ընթերցողին է հրամցում իր ակնարկները, տպավորությունները, մանկության տարիներից, իր իսկ բառերով ասած, «հին ու նոր աշխարհներու սահմանագիծէն» եկող հուշապատումները: Այդ ամենն անմիջապես տեղ են գտնում սփյուռքի բազմաթիվ տպագիր և էլեկտրոնային պարբերականներում (**«Ասպարէզ»**, **«Պայքար»**, **«Հորիզոն գրական»**, **«Ազդակ»**, **«Զարթօնք»**, **«Ժամա-**

նակ» և այլն)՝ արժանանալով ընթերցողների բարձր գնահատանքին: Հուսով ենք՝ Հ. Չոլաքյանի գրական-ստեղծագործական այդ գործերը ևս առաջիկայում գրքերի տեսքով հրատարակություններ կունենան:

Իբրև խմբագիր և խորհրդատու՝ Հ. Չոլաքյանը կարևոր դեր է խաղացել որոշակի ձիրք ունեցող դպրոցականների կազմավորման ու գրական-գեղարվեստական շնորհքների բացահայտման գործում: Նա 1968–1969 և 1973–1974 թվականներին եղել է Այնճարի հայ ավետարանական վարժարանի «Շիրազ», ապա սկսած 1976 թվականից՝ շուրջ 20 տարի, Քարեն Եփփե ճեմարանի «Ծիլեր» պարբերաթերթի պատասխանատու խմբագիրը, որտեղ հանդես եկած դեմքերից շատերը Սփյուռքում և ՀՀ-ում դարձել են ճանաչված գրողներ, հայագետներ, գեղանկարիչներ, լրագրողներ, թարգմանիչներ, ազգային-հասարակական գործիչներ:

Հ. Չոլաքյանի ու նրա հրատարակած գրքերի մասին շուրջ 80 հոդվածներ, գրախոսություններ են գրվել ու գնահատանքի ջերմ խոսքեր ասվել (Գարեգին Բ. կաթողիկոս Մեծի տանն Կիլիկիո, Թորոս Թորանյան, Անդրանիկ Չելեպյան, Արմեն Դարյան, Վերժինե Սվազլյան, Սամվել Մուրադյան, Գևորգ Յազըճյան, Լևոն Շատոյան, Անդրանիկ Դաքեպյան և այլք):

Մայր հայրենիքը, բարձր գնահատելով սփյուռքահայ բազմավաստակ մտավորականի մանկավարժական և գիտական գործունեությունը, Հակոբ Չոլաքյանին 2010 թ. պարգևատրում է **ՀՀ վարչապետի Պատվո հուշամեդալով**, իսկ 2011-ին՝ **ՀՀ նախագահի «Մովսես Խորենացի» մեդալով**:

Որքան էլ հաճելի ու պատվաբեր լինեն հայրենի պետությունից ստացած պարգևները՝ Հ. Չոլաքյանի համար ամենամեծ կոչումը «**ՈՒՍՈՒՑԻՉ ԸԼԼԱԼՆ Է**»: Նա իր 54 տարիների ուսուցչությունը համարում է իր ամենամեծ պարգևն ու նվաճումը:

Այս տարվա գարնան վերջին 75-ամյա Հակոբ Չոլաքյանը Երևանի պետական համալսարանում իր դասախոսական գործունեությունը դադարացնելու և մանկավարժությանը հրաժեշտ տալու վերաբերյալ հայտարարություն էր արել: Այդուհանդերձ նա այն եզակի մանկավարժ-գիտնականներից է, որի հանգիստը հայությանը, հայկական կրթօջախներին ու գիտությանը մինչև վերջին շունչը ծառայելն է:

Այժմ էլ գիտական աշխատանքային գործունեությանը զուգահեռ՝ Չոլաքյանն առկա և առցանց եղանակով շարունակում է մանկավարժական բուռն գործունեություն ծավալել: Նա լեզվի ուսուցման մեթոդական ու գործնական աշխատանքներ է վարում Սփյուռքի տարբեր գաղթօջախների ուսուցչական խմբերի հետ, նրանց հետ անցկացնում օրինակելի դասեր, ուսուցիչների վերապատրաստման դասընթացներ՝ մասնակցելով նաև հայոց լեզվի ուսուցմանը, հայեցի դաստիարակությանն ու հայ դպրոցին նվիրված գիտաժողովներին, հանդես գալով ուսուցման տարատեսակ հարցերին նվիրված հոդվածներով, ելույթներով, հարցազրույցներով:

Յուրաքանչյուր հրատարակված գիրք արժևորվում է նրա կիրառությամբ: Հայագետ Հակոբ Չոլաքյանի թե՛ դպրոցական և բուհական դասագրքերը, թե՛ ազգագրական-պատմագիտական, սփյուռքագիտական, բանագիտական, բարբառագիտական, պատմագիտական, լեզվաբանական և գրականագիտական հրատարակությունները այսօր էլ շարունակում են շրջանառվել ոչ միայն Սփյուռքի ու Մայր հայրենիքի կրթօջախների, գիտական հաստատությունների, երաժշտական արվեստի ու պարարվեստի մասնագետների և ուսանողության միջավայրում, այլև ընթերցող լայն շրջանակներում՝ նպաստելով հայոց լեզվի, հայ մշակույթի և գիտության պահպանմանն ու առաջընթացին:

Արմեն Ծավարչի Սարգսյան
Բանասիրական գիտությունների դոկտոր

**ՀԱԿՈՒՔ ՉՈՒՍԱԲԱՆՆԻ ԿՅԱՆՔԻ
ԵՎ ԳԻՏԱ-ՄԱՆԿԱԿԱՐԺԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ՀԱՄԱՌՈՏ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ**

- 1947 թ.** Ծնվել է հոկտեմբերի 16-ին Սիրիայի Քեսապի շրջանի Գարատուրան գյուղում:
- 1954–1961 թթ.** Նախնական կրթությունն ստացել է Գարատուրան գյուղի Ազգային Մեսրոպյան նախակրթարանում:
- 1961–1963 թթ.** Կրթությունը շարունակել է Քեսապի Հայ ավետարանական Նահատակաց նախակրթարանում:
- 1963–1968 թթ.** Սովորել է Այնճարի (Լիբանան) Հայ ավետարանական երկրորդական վարժարանում:
- 1968–1969 թթ.** Որպես ուսուցիչ՝ աշխատել է Այնճարի Հայ ավետարանական երկրորդական վարժարանում:
- 1969–1970 թթ.** Եղել է Բեյրութի Հայկազյան քոլեջի հայագիտական ամբիոնի մասնավոր ուսանող:
- 1970–1973 թթ.** Ուսանել է Երևանի պետական համալսարանի բանասիրության ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության բաժնում ու հնգամյա կուրսի բոլոր քննությունները երեք տարում հանձնելով՝ ստացել է բանասիրական գիտությունների մագիստրոսի աստիճան, բանասերի ու հայոց լեզվի և գրականության ուսուցչի որակավորում:
- 1973–1976 թթ.** Աշխատել է Այնճարի Հայ ավետարանական երկրորդական, ՀԲԸՄ-ի Բեյրութի Երվանդ Տեմիրճյան վարժարաններում և Ազգային Սուրեն Խանամիրյան քոլեջում:
- 1968–1969 և 1973–1974 թթ.** Եղել է Այնճարի Հայ ավետարանական երկրորդական վարժարանի «Շիրազ» պարբերաթերթի պատասխանատու խմբագիրը:
- 1976 թ.** Լիբանանում սկսված քաղաքացիական պատերազմի պատճառով տեղափոխվել է Սիրիա:
- 1976–2012 թթ.** Որպես ուսուցիչ՝ աշխատել է Հալեպի Քարեն Եփիե ազգային ճեմարանում: Միաժամանակ դասավանդել է Հալեպի Մխիթարյան վարժարանում և Մխիթարյան հայագիտական ամբիոնում:

- 1976–1988 թթ. և 1993–1998 թթ.** Եղել է Հալեպի Քարեն Եփփե ճեմարանի «Ծիլեր» պարբերաթերթի պատասխանատու խմբագիրը:
- 1996–2012 թթ.** Համատեղությամբ Համազգայինի Հալեպի հայագիտական հաստատությունում աշխատել է որպես դասախոս:
- 2002 թ.** ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտում պաշտպանել է «Անտիոքի մերձակայ Ռուճի հովիտի հայերը (Պատմա-ազգագրական ուսումնասիրություն)» գիտական թեզը և ստացել պատմական գիտությունների թեկնածուի աստիճան:
- 2010 թ.** Պարգևատրվել է ՀՀ վարչապետի Պատվո հուշամեդալով:
- 2011 թ.** Պարգևատրվել է ՀՀ նախագահի «Մովսես Խորենացի» մեդալով:
- 2012 թ.** Սիրիայում իսլամիստ ծայրահեղականների հրահրած քաղաքացիական պատերազմի և Հալեպի գնդակոծությունների պատճառով ընտանիքով տեղափոխվել է Միջերկրականի ափին գտնվող հայրենի Գարատուրան գյուղ:
- 2014-ի մարտի 21-ին** Թուրքիայի հովանավորությունը վայելող հակապետական ծայրահեղական խմբավորումների՝ Քեսապ ներխուժումից հետո վերջնականապես հաստատվել է Երևանում:
- 2014-ի ապրիլի 11-ին** որպես ավագ գիտաշխատող՝ աշխատանքի է ընդունվել ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանասիրության բաժնում, որտեղ և աշխատում է առ այսօր:
- 2014–2022 թթ.** Երևանի պետական համալսարանի բանասիրության ֆակուլտետի հայոց լեզվի ամբիոնում դասավանդել է արևմտահայերեն:
- 2014–2019 թթ.** Համատեղությամբ աշխատել է ՀՀ ԳԱԱ Հրաչյա Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի արևմտահայերենի բաժնում:
- 2016 թ.** ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտում պաշտպանել է «Քեսապ (Պատմա-ազգագրական ուսումնասիրություն)» ատենախոսությունը և ստացել պատմական գիտությունների դոկտորի աստիճան:
- 2016 թ.** Ստացել է առաջատար գիտաշխատողի կոչում:
- 2021 թ.** Ստացել է գլխավոր գիտաշխատողի կոչում:

HAGOP MARDA/APRAHAM TCHOLAKIAN

On the 75th anniversary of the birth
of the Armenologist-pedagogue emeritus

The prominent pedagogue and the devout Armenologist Hagop Tcholakian is one of those intellectuals whose sort is rare, especially in the Armenian Diaspora. Extremely honest by character, Hagop Tcholakian is very "dishonest" by the quantity of his valuable researches in different disciplines of Armenology: pedagogy, ethnology, folklore, linguistics, dialectology, literary criticism, historiography, Diaspora affairs, memoirs etc.).

Hagop Tcholakian is born on October 16, 1947 in Karadouran village in the Kessab district of Lattakia province of the Syrian Arab Republic, near the shore of the Mediterranean Sea. He got his elementary education in the National Mesropian School of his native village and the Armenian Evangelical Martyrs' School in Kessab. After he was graduated from the Armenian Evangelical Secondary School in Ainjar (Lebanon), he began his pedagogical career in the same school in 1968.

During the academic year 1969–1970, Hagop Tcholakian was free-lance student at the Armenology Chair in Haigazian College (now University) in Beirut. In 1970, he moved to Soviet Armenia and entered the Department of Armenian Language and Literature of the Faculty of Armenian Philology of Yerevan State University.

Tcholakian's love of the Homeland and the Nature is without limits. The image of a diaspora-born classmate with so much enthusiasm and aspirations was unusual and to some sort strange to us, his classmates, who were raised in Soviet mentality. But Tcholakian was an etalon at the same time. He passed his three-year-long student life in overweight and oversaturated. He not only participated in our raids to different parts of Soviet Armenia, amazed by the nature of the Homeland and its architectural monuments, but also met in his "free hours" repatriates from Kessab in 1946, recorded ethnographical and folklore material from them and even succeeded to decipher the notes of those songs in the State Conservatory after Komitas.

This work was very cordial to his heart and soul: when he was a private student at the Armenology Chair in Haigazian College in 1969–1970, he had done folklore-collecting work and had even published some of the collected material in "Ahekan" periodical paper of his beloved teacher Krikor Shahinian.

Hagop Tcholakian studied in Yerevan State University for three years (1970–1973). In this period, he successfully passed all exams of five years. In 1973 he returned to Ainjar with a Masters in Arts degree in Armenian philology, with the qualification "teacher of Armenian language and literature". In 1973–1976 he served in the Armenian Evangelical School in Ainjar, Armenian General Benevolent Union's Yervand Demirchian Elementary School and Suren Khanamirian National College (both in Beirut). Because of the 1975–1991 civil war in Lebanon, in 1976 he returned to Syria and began to serve in Karen Jeppe National College in Aleppo. In parallel he taught in Mkhitarist School and Mkhitarist Armenological Chair in Aleppo. From 1996 on, Tcholakian in parallel lectured in the Armenology Institute of "Hamazgayin" Armenian Educational and Cultural Union in the same city.

The civil war in Syria ignited by Islamist extremists in 2011 and the bombardments of Aleppo obliged Hagop Tcholakian and his family to move to his native Karadouran village in the Kessab district in 2012. On March 21, 2014, extremist anti-governmental groups under the patronage of Turkey attacked Kessab district, conquered and looted the region. With other Kessabtsis, Tcholakian fled with his family to Lattakia, and after three weeks he and his family moved to the Republic of Armenia and finally settled in Yerevan.

Some may have thought that the emeritus pedagogue-Armenologist had returned to Yerevan to pass the rest of his life enjoying the beauty of his Homeland after suffering the horrors of three wars and deportations: that of Beirut, Aleppo and Kessab. But Tcholakian is not a man of this sort. For him, his repatriation did not mean the end of his career. On the contrary, it was a new start for his constantly searching mind and unresty character.

In 2002, due to the stubborn efforts of his former student, PhD Gevorg Yazichian, Hakob Tcholakian had defended his PhD dissertation which theme was "**The Armenians of Rouj Valley (A Historico-Ethnological**

Research)" based on field work results that Tcholakian himself had done in the villages of Rouj Valley in the north-west of Syria. So, when Tcholakian settled in RA, the directorate of the Institute of Archeology and Ethnography of the National Academy of Sciences of RA immediately offered a post to the emeritus scientist-pedagogue in the Ethnology Department of the Institute as senior researcher. In 2016, Tcholakian defended Doctorate thesis of his 3-volume colossal work "Kessab", volumes I, II, III, and was promoted to the rank of leading, then, after some years, to the rank of chief scientific worker for his unprecedented scientific activity.

In 2014, the Armenian Language Chair of the Faculty of Armenian Philology of YSU also offered to its former student, now a prominent linguist and author of many textbooks for elementary and high schools, Hagop Tcholakian, to lecture Western Armenian in the Faculty.

For some years Tcholakian worked in parallel in the Department of Western Armenian Language of the Institute of Language of NAS RA after Hrachya Acharian.

During eight years that he has settled in the Homeland, Tcholakian has published more than 16 books in ethnography, linguistics, history and other Armenological disciplines as well as memoirs.

The merits of 75 year-old Hagop Tcholakian are wealthy in quantity and quality: about 60 books in different Armenological spheres, many articles in different periodicals, many publications in Facebook which many people like, comment on and share, as well as essays, useful interviews, scientific and pedagogical speeches, etc.

The Armenian people has a proverb for talents like Tcholakian: "When God gives a grace to a man, he gives it abundantly and without limits".

God has bestowed the grace of poetry on Hagop Tcholakian. Moreover, he is one of those rare Armenian pedagogues who combine teaching and lecturing with publication of school and university textbooks of his own pen. It is more than three decades that the school textbooks he has prepared are being used in many elementary, intermediate and secondary schools in many colonies of the Armenian diaspora.

The series "**My Textbook of Armenian Language**" (volumes I–VI, painter and designer: Vicken Bertizlian, 1990–1993), accompanied with di-

rectives to the teachers, due to the methods, form and aims, was innovation not only in the Armenian Diaspora, but also in Armenia. The sponsor of the series designed for the elementary schools was the Prelacy of the Armenian Church in Aleppo.

The preparation of school textbooks and their directives had passed thorough professional debates and propositions. A main evident side of the series "**My Textbook of Armenian Language**" is that the textbooks are prepared with the concern that the Armenian students acquire the vocabulary and terms of different sciences taught in the Armenian elementary schools in foreign languages (mathematics, physics, anatomy, geography, history, etc.). The method was to give this knowledge through Armenian literature texts, so that the students could absorb the knowledge easily. For intermediate and secondary schools, Tcholakian prepared the "**Andastan**" series (volumes I–VI, 2009–2014) in which linguistics and literature go parallel to each other from the 7th grade to the 12th grade.

One of main scientific interests of Hagop Tcholakian is Western Armenian language with its classic orthography. He does this work not only as his circumstance of teacher and lecturer of the Armenian language, but also moved by concern to systemize different problems of this language. These problems often were and still are in the center of public debates in the Diaspora.

Pedagogue Tcholakian is the author of many valuable works dedicated to the classic orthography and grammar of Western Armenian language: "**The Traditional Orthography of the Armenian Language**" (2000), "**The Traditional Orthography (Regulation and Problems)**", Vol. I (2016), "**Grammar of Western Armenian Language (Regulation and Problems)**", Vol. I (2017), "**Problems of Regulation of Western Armenian Language (Non-inclinable Parts of the Speech)**" (2018), "**Practical Western Armenian Language**" (2018), "**Grammar of Western Armenian Language (Regulation and Problems)**", Vol. II (2019).

The first book of Hagop Tcholakian, "**Thus Began the Spring**" (1970) was poetry in which the author had expressed the first romantic, but mature scream of his soul. But after the publication of this book, 23 year-old Tcholakian consciously shut down the poet in himself and dedicated him-

self to become the popular annalist of the material and cultural heritage of the Armenians who had settled in Kessab district in Antioch region a millennium ago, during the migrations of IX–XI centuries.

Young Tcholakian was fully aware that the Armenian population of Antioch region, living for more than a millennium in a milieu of neighboring peoples who spoke in different languages and followed different religions, had tried by all means to keep the unique material and spiritual unique treasures in the turmoil of centuries. But new times instigated their rules and games putting under threat the very existence of the cultural heritage of small peoples.

And it is not accidental that half of the books of Hagop Tcholakian, about 30 volumes, are dedicated to the history, ethnography and folklore of the Armenian population of this region. Let us mention some of them: **"The Popular Musical Art of Kessab"**, **"Anecdotes of Rural Areas"**, **"Kessab (volumes I, II, III)"**, **"The Dialect of Kessab"**, **"The Armenians of Rouj Valley (A Historico-Ethnological Research)"**, **"The Droughty Spring Flows Again (the Narrative of Sarkis Kabaghian about the Heroic Defense of Moussa Ler)"**, **"The Three Days of Kessab (21–23 March 2014)"**, **"The Material Culture of Kessab"**, **"The Armenians and Other Communities of Historical Antioch"** (under publication), etc.

For Armenian Diaspora history, the books about the Armenian colonies in the Middle East, specially the Armenian colony of Syria (its formation, the new settlements of the Armenian refugees, etc.) are very valuable. In this regard the initial point of Tcholakian is the Armenian school, because the very existence of the community, the Armenian parties and organizations, the Armenian cultural, social and ideological life are based on the Armenian school.

All these aspects are reflected in detail in jubilee memorial volumes of some Armenian schools written, compiled and edited by Hagop Tcholakian: **"The 50th Anniversary of Karen Jeppe National College, 1947–1997"**, **"The 80th Anniversary of Sahakian National School of Aleppo, 1927–2007"**, **"Gold Book of the National School of Kuwait, 1961–2011"**, **"Chronicles of Armenian Evangelical "Bethel" School of Aleppo, 1923–2013"**.

In these books, Hagop Tcholakian develops a unique method of chronology. In the beginning he gives the history of the Armenian colony, writes about the whole education system of Armenian schools in the colony, stressing the weight and role of every Armenian educational institution in the colony. The book, "**Karen Jeppe in the Armenian Golgotha and Rebirth**" (2001), dedicated to the life and orphan-collecting activity of the Danish missionary Karen Jeppe, can be classified in the series of books about this theme.

Tcholakian published in two volumes the history of the Armenian education in the Mother Colony, Syria, beginning from the late Middle Ages till nowadays ("**The History of the Armenian School in Syria**", **volumes I and II**, 2021). In dealing with this theme, Tcholakian represents about 240 Armenian daily, one-day, Sunday, evening, night, crafts' and summer schools in about 110 cities, towns and villages in Syria.

Besides his multi-vectored activities in pedagogy and philology, literature and literary criticism remained a daily interest for Tcholakian. The scholar entered in the Armenian Literature with his poems published in "Spurk" weekly paper and "Spurk-Garoun" series of the prominent Armenian intellectual Simon Simonian in Beirut. Although Tcholakian then willingly left the poetry and shifted to Armenology, specially the collection of ethnological and folklore material of Armenian villages in Antioch region, he never broke his ties with literature and literary criticism. Tcholakian became a welcomed lecturer in jubilee celebrations of many Armenian writers. In his speeches, dozens of articles as well as with his monograph "**The Self-Recognizing Poetry of Artsakh**" (1990), he represented to the public the basic characteristics of literature of some circles (Syria, Constantinople, Artsakh). In the last decades, in his Facebook page, Tcholakian writes about his memoirs from childhood, tales, legends, traditions, celebrations, memories "from the border of the old and new worlds" as he notes. They are classified under some topics, namely "**Preoccupations about the Language**", "**The Ruining Schools**", "**I with Me**". Many paper and electronic periodicals of the Diaspora ("Asparez", "Paykar", "Horizon Grakan", "Azdak", "Zartonk", "Jamanak", "Azat Khosk", "Geghard", etc.) publish these writings in their papers or in their sites. They get many likes, comments and shares

of the readers. We hope that these writings be compiled and published in a series of books.

As editor and consultant, Hagop Tcholakian has played a crucial role in the discovery and encouragement of many students with obvious grace in different disciplines of Armenology. He was the responsible editor and/or consultant of "**Shiraz**" periodical of the Armenian Evangelical School in Ainjar (1968–1969 and 1973–1974), and for about 20 years (1976–1988, 1993–1998), the student "**Tsiler**" paper of Karen Jeppe National College. Many of these students later became well-known writers, editors of periodicals and books, Armenologists, painters, journalists, translators, social workers, etc.

Till now more than 80 articles, book reviews or other publications have been published about Hagop Tcholakian and/or his books with very warm words addressed to him (Catholicos Garegin II of the Great House of Cilicia, Toros Toranian, Andranik Chelepian, Armen Darian, Verjiné Svazlian, Samuel Muradian, Gevorg Yazedjian, Levon Sharoyan, Andranik Dakessian and others).

The authorities of the Republic of Armenia have highly appreciated the devotional pedagogical and armenological activity of Hagop Tcholakian, the evidence of which are the state prizes bestowed to him: "**Honorary Medal of the Prime Minister of RA** (2010) and "**Movses Khorenatsi**" **medal of the president of RA** (2011).

Of course, the gifts bestowed to him by the government of the Homeland are pleasant and honorable for Tcholakian. However, the biggest title for Tcholakian is "**TO BE A TEACHER**". He considers 53 years in teaching his biggest gift and realization.

In late spring of this year, 75 year-old Hagop Tcholakian has declared in YSU about his decision to put end to his teacher's and lecturer's career of 54 years. However, he is one of those unique pedagogues and scientists whose rest is serving to the last breathe the Armenian nation, the Armenian educational institutions and Armenology.

Nowadays, besides his scientific activities, Tcholakian continues his impatient pedagogical activity in the halls of universities and online. He leads classes of methods of teaching the Armenian language as well as practical

works with teachers of the Armenian language from different countries of the Diaspora. He passes with them model lessons, courses of raising teachers' qualification. He continues to take part in scientific conferences about the teaching of the Armenian Language, Armenian education and the Armenian school, with articles related to different problems of teaching.

Every published book is evaluated by its practical use. The publications of Armenologist Hagop Tcholakian – school and university textbooks, books about history, ethnology, folklore, dialect, language, diaspora, literary criticism – continue to be circulated in the educational and scientific institutions and in the milieu of university students and specialists of music and dance art, as well as in the circle of a wide range of readers. These publications contribute to the preservation and progress of the Armenian language, culture and Armenology.

Armen Shavarsh Sargssian
Doctor of Philological Sciences

A CONCISE CHRONOLOGY OF BIOGRAPHY AND SCIENTIFIC-PEDAGOGICAL ACTIVITIES OF HAGOP TCHOLAKIAN

- 1947** Birth on October 16, 1947, in Karadouran village of Kessab region of Lattakia province of Syria.
- 1954–1961** Elementary education in Mesropian National Elementary School in Karadouran.
- 1961–1963** Continuation of elementary education in the Armenian Evangelical Martyrs' School in Kessab.
- 1963–1968** Intermediate and secondary education in the Armenian Evangelical School in Ainjar (Lebanon).
- 1968–1969** Teacher in the Armenian Evangelical School in Ainjar.
- 1969–1970** Free-lance student at the Armenology Chair in Haigazian College in Beirut.
- 1970–1973** Student at the Armenian Language and Literature Department of Armenian Philology Faculty of Yerevan State University. Passes all exams of five years in three years period, gets Masters in Arts degree in Armenian philology, with the qualification "teacher of Armenian language and literature".
- 1973–1976** Teacher in the Armenian Evangelical School in Ainjar, AGBU Yervand Demirchian Elementary School and Suren Khanamirian National College in Beirut.
- 1968–1969, 1973–1974** Responsible editor of "Shiraz" periodical paper of the Armenian Evangelical School in Ainjar.
- 1976** Passage to Syria because of the civil war in Lebanon.
- 1976–2012** Teacher in Karen Jeppe National College in Aleppo. In parallel teacher in Mkhitarist School and Mkhitarist Armenological Chair in Aleppo.

- 1976–1988, 1993–1998** Responsible editor of "Tsiler" periodical paper of the Karen Jeppe Armenian College in Aleppo.
- 1996–2012** Lecturer in the Armenology Institute of "Hamazgayin" Armenian Educational and Cultural Union in Aleppo.
- 2002** Defense of PhD dissertation "The Armenians of Rouj Valley (A Historico-Ethnological Research)" in the Institute of Archeology and Ethnography of the National Academy of Sciences of RA.
- 2010** Honorary Medal of the Prime Minister of RA.
- 2011** "Movses Khorenatsi" medal of the president of RA.
- 2012** The Syrian civil war ignited by Islamist extremists in 2011 and the bombardments of Aleppo oblige Hagop Tcholakian and his family to move to his native Karadouran village in the Kessab district.
- March 21, 2014** Extremist anti-governmental groups under the patronage of Turkey attack Kessab district.
- April 2014** Move to the Republic of Armenia and settlement in Yerevan.
- April 11, 2014** Senior researcher in the Ethnology Department of the Institute of Archeology and Ethnography of NAS RA, where he continues to work till now.
- 2014–2022** Lecturer of Western Armenian in the Chair of Armenian Language in the Faculty of Armenian Philology of YSU.
- 2014–2019** In parallel, scientific worker in the Western Armenian Language Department of the Institute of Language of NAS RA after Hrachya Acharian.
- 2016** Defense of Doctorate thesis of his 3-volume colossal work "Kessab (A Historico-Ethnological Research)", Volumes I, II, III in the Institute of Archeology and Ethnography of the National Academy of Sciences of RA.
- 2016** Leading scientific worker.
- 2021** Chief scientific worker.

I. ՏՊԱԳԻՐ ԳՐՔԵՐԻ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ՝
ԸՍՏ ՈԼՈՐՏՆԵՐԻ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ

Ա. ԴՊՐՈՑԱԿԱՆ ԴԱՍԱԳՐՔԵՐ
ԵՎ ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑՆԵՐ

1. ՀԱՅԵՐԷՆԻ ԴԱՍԱԳԻՐՔՍ, Ա., նկարիչ՝ Վիգեն Պերթիզեան, գունաւոր, հրատ. Բերիոյ թեմի Ուսումնական խորհուրդի, տպ. Արեւելք, Հալէպ, 1990, 92 էջ:
2. ՀԱՅԵՐԷՆԻ ԴԱՍԱԳԻՐՔՍ, Բ., նկարիչ՝ Վիգեն Պերթիզեան, գունաւոր, հրատ. Բերիոյ թեմի Ուսումնական խորհուրդի, տպ. Արեւելք, Հալէպ, 1991, 96 էջ:
3. ՀԱՅԵՐԷՆԻ ԴԱՍԱԳԻՐՔՍ, Գ., նկարիչ՝ Վիգեն Պերթիզեան, գունաւոր, հրատ. Բերիոյ թեմի Ուսումնական խորհուրդի, տպ. Արեւելք, Հալէպ, 1991, 92 էջ:
4. ՀԱՅԵՐԷՆԻ ԴԱՍԱԳԻՐՔՍ, Դ., նկարիչ՝ Վիգեն Պերթիզեան, գունաւոր, հրատ. Բերիոյ թեմի Ուսումնական խորհուրդի, տպ. Արեւելք, Հալէպ, 1991, 106 էջ:
5. ՀԱՅԵՐԷՆԻ ԴԱՍԱԳԻՐՔՍ, Ե., նկարիչ՝ Վիգեն Պերթիզեան, գունաւոր, հրատ. Բերիոյ թեմի Ուսումնական խորհուրդի, տպ. Արեւելք, Հալէպ, 1992, 104 էջ:
6. ՀԱՅԵՐԷՆԻ ԴԱՍԱԳԻՐՔՍ, Զ., նկարիչ՝ Վիգեն Պերթիզեան, գունաւոր, հրատ. Բերիոյ թեմի Ուսումնական խորհուրդի, տպ. Արեւելք, Հալէպ, 1993, 104 էջ:
7. ՀԱՅԵՐԷՆԻ ԴԱՍԱԳԻՐՔՍ, Ա., երկրորդ բարեփոխումած տպագրութիւն, Հալէպ, 2000:
8. ՀԱՅԵՐԷՆԻ ԴԱՍԱԳԻՐՔՍ, Բ., երկրորդ բարեփոխումած տպագրութիւն, Հալէպ, 2000:
- 9-14. ՈՒՂԵՑՈՒՅՑ «ՀԱՅԵՐԷՆԻ ԴԱՍԱԳԻՐՔՍ», ուսուցիչի ուղեցոյց «Հայերէնի դասագիրքս» շարքի վեց գիրքերուն, Հալէպ, 1990: Տպուած են նաեւ առանձին, 60-ական էջ:

15. **ԱՆԴԱՍՏԱՆ Ա.**, գրականության և լեզուի համադրեալ ձեռնարկ միջնակարգ և երկրորդական կարգերու համար, հրատ. Բերիոյ թեմի Ազգային առաջնորդարանի, տպ. Արեւելք, Հալէպ, 2009, 160 էջ:
16. **ԱՆԴԱՍՏԱՆ Բ.**, գրականության և լեզուի համադրեալ ձեռնարկ միջնակարգ և երկրորդական կարգերու համար, հրատ. Բերիոյ թեմի Ազգային առաջնորդարանի, տպ. Արեւելք, Հալէպ, 2009, 168 էջ:
17. **ԱՆԴԱՍՏԱՆ Գ.**, գրականության և լեզուի համադրեալ ձեռնարկ միջնակարգ և երկրորդական կարգերու համար, հրատ. Բերիոյ թեմի Ազգային առաջնորդարանի, տպ. Արեւելք, Հալէպ, 2010, 136 էջ:
18. **ԱՆԴԱՍՏԱՆ Դ.**, գրականության և լեզուի համադրեալ ձեռնարկ միջնակարգ և երկրորդական կարգերու համար, հրատ. Բերիոյ թեմի Ազգային առաջնորդարանի, տպ. Արեւելք, Հալէպ, 2012, 136 էջ:
19. **ԱՆԴԱՍՏԱՆ Ե.**, գրականության և լեզուի համադրեալ ձեռնարկ միջնակարգ և երկրորդական կարգերու համար, հրատ. Բերիոյ թեմի Ազգային առաջնորդարանի, տպ. Արեւելք, Հալէպ, 2012, 136 էջ:
20. **ԱՆԴԱՍՏԱՆ Զ.**, գրականության և լեզուի համադրեալ ձեռնարկ միջնակարգ և երկրորդական կարգերու համար, հրատ. Բերիոյ թեմի Ազգային առաջնորդարանի, տպ. Արեւելք, Հալէպ, 2014, 120 էջ:
21. **ՀԱՅԵՐԷՆԻ ԴԱՍԸՆԹԱՅՔ, Ա.**, Հնչինաբանութիւն ու բառագիտութիւն, հրատ. Համազգայինի Հայագիտական հիմնարկի, խմորատիպ, Հալէպ, 1996, 42 էջ:
22. **ՀԱՅԵՐԷՆԻ ԴԱՍԸՆԹԱՅՔ, Բ.**, Ձեռաբանութիւն, հրատ. Համազգայինի Հայագիտական հիմնարկի, խմորատիպ, Հալէպ, 1996, 42 էջ:
23. **ՀԱՅԵՐԷՆԻ ԴԱՍԸՆԹԱՅՔ, Գ.**, Շարահիւսութիւն, հրատ. Համազգայինի Հայագիտական հիմնարկի, խմորատիպ, Հալէպ, 1996, 42 էջ:
24. **ՀԱՅԵՐԷՆԻ ԴԱՍԸՆԹԱՅՔ, Դ.**, Լեզուի պատմութիւն, հրատ. Համազգայինի Հայագիտական հիմնարկի, խմորատիպ, Հալէպ, 1996, 42 էջ:

**Բ. ԲԱՐԲԱՌԱԳԻՏԱԿԱՆ,
ԼԵԶԿԱԲԱՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

1. **ՔԵՍԱԳԻ ԲԱՐԲԱՌԸ**, տպ. Վարդան Սրապեան, Հալէպ, 1986, 370 էջ:
2. **ՔԵՍԱԳԻ ԲԱՐԲԱՌԸ**, լրացումներով վերահրատարակութիւն, ԵՊՀ եւ «Հայաստան» հրատարակչութիւններ, Երեւան, 2009, 380 էջ:
3. **ՀԱՅԵՐԷՆԻ ԱԻԱՆԴԱԿԱՆ ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆ**, տպ. Արեւելք, Հալէպ, 2000, 96 էջ:
4. **ԱԻԱՆԴԱԿԱՆ ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆ (Կանոնակարգ եւ խնդիրներ)**, Հայկարիի ՄՊԸ տպարան, Երեւան, 2016, 168 էջ:
5. **ԱՐԵՒՄՏԱՀԱՅԵՐԷՆԻ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ (Կանոնակարգ եւ խնդիրներ)**, Ա. գիրք, հրատ. ՀՀ ԳԱԱ Հր. Աճառեանի անուան լեզուի ինստիտուտի, տպ. Ասողիկ, Երեւան, 2017, էջ 216:
6. **ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՐԵՒՄՏԱՀԱՅԵՐԷՆ**, խմբագիր՝ Կարօ Յովհաննէսեան, հրատ. «Գէորգ Մելիտինեցի» գրական մրցանակի, թիւ 95, Անթիլիաս, 2018, 380 էջ:
7. **ԱՐԵՒՄՏԱՀԱՅԵՐԷՆԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՐՑԵՐ (Չթերուող խօսքի մասեր)**, հրատ. ՀՀ ԳԱԱ Հր. Աճառեանի անուան լեզուի ինստիտուտի, տպ. Ասողիկ, Երեւան, 2018, 136 էջ:
8. **ԱՐԵՒՄՏԱՀԱՅԵՐԷՆԻ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ** (Կանոնակարգ եւ խնդիրներ), Բ. գիրք, հրատ. ՀՀ ԳԱԱ Հր. Աճառեանի անուան լեզուի ինստիտուտի, տպ. Ասողիկ, Երեւան, 2019, 152 էջ:

**Գ. ՍՓՅՈՒՌՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ. ԱՐԱԲԱԿԱՆ ԱՐԵՎԵԼՔԻ
ԵՐԿՐՆԵՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԿՐԹՕՋԱԽՆՆԵՐԻՆ ՆՎԻՐԿԱԾ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

1. **ՅԻՄՆԱՄԵԱԿ ՔԱՐԷՆ ԵՓՓԷ ԱԶԳԱՅԻՆ ՃԵՄԱՐԱՆԻ**, 1947–1997, Հալէպ, 1997, 762 էջ:
2. **ՔԱՐԷՆ ԵՓՓԷ ՀԱՅ ԳՈՂԳՈԹԱՅԻՆ ԵՒ ՎԵՐԱԾՆՈՒՆԴԻՆ ՀԵՏ**, տպ. Արեւելք, Հալէպ, 2001, 168 էջ:
3. **ՈՒԹՍՈՒՆԱՄԵԱԿ ՀԱԼԷՊԻ ԱԶԳԱՅԻՆ ՍԱՀԱԿԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ**, 1927–2007, տպ. Արեւելք, Հալէպ, 2007, 606 էջ:

4. **ՈՍԿԵՄԱՏԵԱՆ ՔՈՒԷՅԹԻ ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ**, 1961–2011, տպ. Աիրամ, Քուէյթ, 2011, 760 էջ:
5. **ՏԱՐԵԳՐՈՒԹԻՒՆ ՀԱԼԷՊԻ ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԲԵԹԷԼ ՎԱՐԺԱՐԱՆԻ**, 1923–2013, հրատ. Սուրիոյ հայ անտարանական Կրթական խորհուրդի, Հալէպ, 2016, 660 էջ:
6. **ՍՈՒՐԻԱՀԱՅ ԴՊՐՈՑԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ**, Ա. **հատոր**, Երեւան, հրատ. ՀՀ ԳԱԱ հնագիտութեան եւ ազգագրութեան ինստիտուտի, Էդիթ պրինտ, Երեւան, 2021, 648 էջ:
7. **ՍՈՒՐԻԱՀԱՅ ԴՊՐՈՑԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ**, Բ. **հատոր**, Երեւան, հրատ. ՀՀ ԳԱԱ հնագիտութեան եւ ազգագրութեան ինստիտուտի, Էդիթ պրինտ, Երեւան, 2021, 608 էջ:

Դ. ՊԱՏՄԱ-ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԵՎ ԲԱՆԱՅՅՈՒՄԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **ՔԵՏԱՊԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԱՐՈՒԵՍՏԸ**, ձայնագրութիւնները՝ Ժիրայր Րէխեանի, տպ. Էլ-Շարք, Հալէպ, 1980, 124 էջ:
2. **ՑԱՄՔԱԾ ԱՂԲԻՒՐԸ ՆՈՐԷՆ ԿԸ ԲԽԻ** (Սարգիս Գալաղեանի պատումը Սուսա Լերան հերոսամարտի մասին), տպ. Էլ-Շարք, Հալէպ, 1981, 96 էջ:
3. **ՄԻՋ-ԳԱՒԱՌԱԿԱՆ ԱՆԵՔԹՈՏՆՆԵՐ**, տպ. Արեւելք, Հալէպ, 1988, 120 էջ:
4. **ՔԵՏԱՊ**, Ա. **հատոր**, հրատ. Համազգայինի Հալէպի մասնաճիւղի, տպ. Արեւելք, Հալէպ, 1995, 572 էջ:
5. **ՔԵՏԱՊ**, Բ. **հատոր**, հրատ. Ամերիկաբնակ քեսապցիներու ուսումնասիրաց միութեան, տպ. Ասֆահանի, Հալէպ, 1998, 568 էջ:
6. **ՔԵՏԱՊ**, Գ. **հատոր**, հրատ. Ամերիկաբնակ քեսապցիներու ուսումնասիրաց միութեան, տպ. Արեւելք, Հալէպ, 2004, 672 էջ:
7. **ՄԻՋ-ԳԱՒԱՌԱԿԱՆ ԱՆԵՔԹՈՏՆՆԵՐ**, երկրորդ հրատարակութիւն, յանելումներով, երգիծանկարները՝ Վրէժ Քասունիի, Հալէպ, 2005, 176 էջ:
8. **ԱՅՆԹԱՊՅԻԱԿԱՆ ԱՆԵՔԹՈՏՆՆԵՐ** (Այնթապի գոյամարտի 85-ամեակի առթիւ քաղուած Պրն. Յակոբ Չոլաքեանի «Միջգաւառական անըքթոսներ» գրքոյկէն), տպ. Ոսկետատ, Հալէպ, 2006, 68 էջ:

9. ԱՆՏԻՌՔԻ ՄԵՐՁԱԿԱՅ ՌՈՒՃԻ ՀՈՎԻՏԻ ՀԱՅԵՐԸ (Պատմա-ազգագրական ուսումնասիրություն), հրատարակություն «Ռիչըրտ և Թինա Գարոլան» հրատարակչական հիմնադրամի, թիւ 2, Անթիլիաս, 2006, 260 էջ:
10. ՔԵՍԱԳԻ ԵՐԵՔ ՕՐԵՐԸ (21–23 մարտ 2014), Էդիթ պրինտ, Երևան, 2015, 127 էջ:
11. THE THREE DAYS OF KESSAB (21–23 March, 2014), translated by Yervant Kotchounian, 2015, Charleston, SC., USA, 170 p.
12. ՔԵՍԱԳԻ, Արեւմտեան Հայաստանի և Կիլիկիոյ Յուշամատեաններ, թիւ 8, հրատ. Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան, Անթիլիաս, 2015, 1348 էջ:
13. ՔԵՍԱԳԻ ՆԻԻԹԱԿԱՆ ՄՇԱԿՈՅԹԸ, հրատ. ՀՀ ԳԱԱ հնագիտութեան և ազգագրութեան ինստիտուտի, Էդիթ պրինտ, Երևան, 2020, էջ 264:
14. ՕՍՄԱՆԵԱՆ ԲԱՆԱԿԻ ԶԻՆՈՒՈՐ ՍԱՐԳԻՍ ՀԱՆԻԵԱՆԻ ՎԿԱՅՈՒԹԻԻՆԸ, գրի առաւ Յակոբ Հանիեան, յառաջաբանով և ծանօթագրութեամբ հրատարակութեան պատրաստեց Յակոբ Չոլաքեան, հրատ. ՀՀ ԳԱԱ հնագիտութեան և ազգագրութեան ինստիտուտի, Էդիթ պրինտ, Երևան, 2020, 124 էջ:
15. ՊԱՏՄԱԿԱՆ ԱՆՏԻՌՔԻ ՀԱՅԵՐԸ ԵՒ ՄԻԻՍ ՀԱՒԱՔԱԿԱՆՈՒԹԻՆՆԵՐԸ, ՀՀ ԳԱԱ հնագիտութեան և ազգագրութեան ինստիտուտի հրատարակչություն, Երևան, 2022, շուրջ 450 էջ (տպագրական ընթացքի մէջ է):

Ե. ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

1. ԱՅՍՊԷՍ ՄԿՍԱԻ ԳԱՐՈՒՆԸ, բանաստեղծություններ, «Սփիւռք – Գարուն» մատենաշար, տպ. Սեւան, Պէյրութ, 1970, 60 էջ:
2. ԱՐՑԱՆԵԱՆ ԻՆՔՆԱՃԱՆԱՉՄԱՆ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՆԸ, տպ. Արեւելք, Հալէպ, 1990, 80 էջ:

2. ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՍՈՒԼԻ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

1. ՀԱԼԷՊԱՀԱՅ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՍՈՒԼԻ ՀԱՄԱՌՕՏ ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՆ (Քարէն Եփփէ Ազգ. Ճեմարանի համանուն ցուցահանդէսի նիւթերը), խմորատիպ, Հալէպ, 1978, 64 էջ:

II. ՏՊԱԳԻՐ ՀՈՂՎԱՃՆԵՐԻ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ՝ ԸՍՏ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ

1. **Այնճարի Հայ աւետարանական երկրորդական վարժարանը**, *Սփիւռք*, շաբաթաթերթ, Պէյրուս, 25 յունիս 1967, թիւ 26, էջ 12:
2. **Վեհանոյշ Թէքեանի արտասանական գոյգ ելոյթները Պէյրուս եւ Այնճար**, *Սփիւռք*, շաբաթաթերթ, Պէյրուս, 16 յունիս 1968, թիւ 23, էջ 12:
3. **Քեսապի ժողովրդական բանահիւսութիւնը**, փունջ մը հեքիաթներ, խաղիկներ ու պարերգներ՝ ընդարձակ ներածութեամբ, բնագիրով ու վերածումով, ծանօթագրութիւններով, *Ահեկան* մշակութային եռամսեայ հանդէս, Պէյրուս, 1969, թիւ 4, էջ 23–58:
4. **Երգահան վերապատուելիին համերգը**, *Սփիւռք*, շաբաթաթերթ, Պէյրուս, 17 մայիս 1970, թիւ 20–22, էջ 13:
5. **Քեսապի ժողովրդական բանահիւսութիւնը**, փունջ մը առակներ ու հեքիաթներ, բնագիրով ու վերածումով, ծանօթագրութիւններով, *Ահեկան* մշակութային եռամսեայ հանդէս, Պէյրուս, 1970, թիւ 1–2, էջ 91–108:
6. **Քեսաբի բարբառի ձայնավորներն ու երկբարբառները**, «Ուսանողական գիտական աշխատանքներ», թիւ 17, Երևանի պետական համալսարան, Երևան, 1975, էջ 170–174:
7. **Բանահաւաքումը՝ անհրաժեշտութիւն**, *Սփիւռք*, շաբաթաթերթ, Պէյրուս, 13 ապրիլ 1975, թիւ 14, էջ 4–5:
8. **Գրադատական – «Մուսա Լերան ժողովրդական հեքիաթներ», հեղինակ՝ Սոնա Զէյթեան**, *Սփիւռք*, շաբաթաթերթ, Պէյրուս, 9 փետրուար 1975, թիւ 5, էջ 6–7–8:
9. **Հայերէնի ուսուցման մասին**, *Ազդակ*, օրաթերթ, Պէյրուս, 15 փետրուար 1979:
